ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱՆՇԱՐԺ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՈՒ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ»

Գ Լ ՈՒ Խ 1

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1.1. Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **պատմության և մշակույթի անշարժ հուշարձան**՝ պետական հաշվառման վերցված և հուշարձանի կարգավիճակ ունեցող պատմական կամ հնագիտական կամ ճարտարապետական կամ մոնումենտալ արվեստի կամ գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող հնագիտական շերտերը, քարեդարյան կայանները, քարայր-կացարանները, կառույցները, դրանց համակառույցներն ու համալիրները՝ իրենց զբաղեցրած և պատմականորեն դրանց հետ կապված տարածքով, դրանց մաս կազմող հնագիտական, գեղարվեստական, վիմագրական, ազգագրական բնույթի տարրերն ու բեկորները, որմնանկարները, պատմամշակութային ~~արգելոցները~~ հնավայրերը պատմական լանդշաֆտները և հիշարժան վայրերը, պատմական բնակավայրերի քաղաքաշինական և պատմական կենտրոնները՝ անկախ պահպանվածության աստիճանից.

2) **պատմամշակութային օբյեկտ**՝ նոր հայտնաբերված և պետական հաշվառման վերցված օբյեկտ, որը դեռևս չի ստացել նորահայտ հուշարձանի կարգավիճակ.

3) **նորահայտ հուշարձան**՝ մինչև հուշարձանների պետական ցուցակում ընդգրկվելը օրենսդրությամբ սահմանված կարգով պահպանվող պատմական, գիտական, գեղարվեստական կամ մշակութային այլ արժեք ունեցող որոշակի կարգավիճակ ստացած՝ նոր հայտնաբերված կամ նոր արժեքավորված օբյեկտ.

4) **հուշարձանի տարածք**՝ հուշարձանի տարածքն իր զբաղեցրած և պատմականորեն ու գործառնական առումով դրա հետ կապված և սահմանված կարգով առանձնացված հողատարածք.

5) **պատմական միջավայր**՝ մարդու գործունեությամբ ձևավորված պատմական և մշակութային որոշակի արժեք ունեցող միջավայր.

6) **հուշարձանի պահպանական գոտիներ**՝ հուշարձանի պահպանության, կառուցապատման կարգավորման կամ տեղանքապատկերի (լանդշաֆտի) պահպանման գոտիների տարածքներ և դրանցում օգտագործման պայմանակարգ (ռեժիմ) սահմանող փաստաթուղթ.

7) **հուշարձանի պահպանության գոտի**՝ հուշարձանի պատմական միջավայրի անմիջական ազդեցության և (կամ) հնարավոր հնագիտական շերտերի որոշակի պահպանության պայմանակարգ (ռեժիմ) ունեցող տարածք.

8) **կառուցապատման կարգավորման գոտի**՝ հուշարձանի քաղաքաշինական միջավայրի պահպանության, ներդաշնակ և բարենպաստ տեսողական ընկալման պայմանակարգ (ռեժիմ) ունեցող տարածք.

9) **տեղանքապատկերի (լանդշաֆտի) պահպանման գոտի**՝ հուշարձանի պատմական միջավայրի բնական կամ պատմականորեն ձևավորված բնապատմական ռելիեֆի, ջրային մակերեսների և բուսականության պահպանության ռեժիմ ունեցող տարածք.

10) **հուշարձանի ուսումնասիրություն**՝ հուշարձանի ու դրա տարածքի մատենագրական, արխիվային, գիտահետազոտական աղբյուրներից նյութերի վավերագրում, հավաքում,

հնագիտական, երկրաբանական, ինժեներական (նյութագիտական, կոնստրուկտորական, տեխնիկական վիճակի և այլ) հետազոտություններ.

11) **հնագիտական հետախուզում**՝ որոշակի տարածքների համալիր հետազոտություն հնագիտական օբյեկտների հայտնաբերման, քարտեզագրման, նկարագրության նպատակով, վերգետնյա կառույցների կամ այլ բաղկացուցիչների՝ տարբեր մեթոդներով վավերագրում կամ փոքրածավալ ստուգողական պեղումների իրականացում.

12) **հնագիտական պեղում**՝ մշակութային շերտերի, հնագիտական օբյեկտների ու հուշարձանների՝ դաշտային պայմաններում կատարվող գիտահետազոտական և գիտագործնական համալիր ուսումնասիրություններ, որոնք իրականացվում են տարածքների վերգետնյա, ստորգետնյա և ստորջրյա տեղազննության, մշակութային շերտերի բացման, հայտնաբերված նյութական մնացորդների ու հետքերի՝ տարբեր եղանակներով փաստագրման և վավերագրման միջոցով.

13) **հուշարձանի վերականգնողական աշխատանք**՝ հուշարձանի ամրակայման, նորոգման և վերականգնման գործունեության իրականացում.

14) **հուշարձանի պահպանական գոտիների օգտագործման պայմանակարգ (ռեժիմ)**՝ հուշարձանների պահպանական գոտիների պատմական միջավայրի պահպանության և օգտագործման պայմաններին, պահանջներին և սահմանափակումներին վերաբերող պարտադիր դրույթներ.

15) **պատմամշակութային հիմնավորման նախագիծ**՝ պատմական բնակավայրերի, դրանց կենտրոնների կամ առանձին հատվածների պահպանության և օգտագործման պայմանակարգ, ինչպես նաև կառուցապատման թույլատրելի դրույթներ սահմանող նախագիծ (ծրագրային փաստաթուղթ).

16) **հուշարձանների պետական կադաստր**՝ պետական տեղեկատվական համակարգ, որը պարունակում է տեղեկություններ հուշարձանների և դրանց տարածքների, պահպանական գոտիների և դրանցում առկա հողատեսքերի, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերի, բնապատմական և պատմամշակութային ~~արգելոցների~~ հնավայրերի, պետական հաշվառման փաստաթղթերի և վավերագրերի մասին.

17) **մշակութային շերտ**՝ մարդկային գործունեությամբ առաջացած, այդ գործունեության մասին վկայող նյութական մնացորդներ պարունակող վերգետնյա, ստորգետնյա կամ ստորջրյա շերտ.

18) **պատմական բնակավայր**՝ Հայաստանի Հանրապետության ժողովրդի մշակութային ինքնատիպության պահպանության համար կարևոր նշանակություն ունեցող՝ հնագիտական, պատմական, ճարտարապետական, քաղաքաշինական, գեղագիտական, գիտական կամ սոցիալ-մշակութային այլ արժեքներ ներառող բնակավայր.

19) **հուշարձանների և պատմական միջավայրի պահպանություն**՝ հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության ապահովման կանխարգելիչ միջոցառումների համակարգ.

20) ~~**արգելոց**~~**հնավայր-թանգարան**՝ շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, գիտալուսավորչական, կրթական, գիտատեղեկատվական, մշակութային գործունեություն իրականացնող կազմակերպություն, որն ստեղծվում է ավանդական և պատմական (մշակութային և բնական) միջավայրում անշարժ հուշարձանների, հուշարձանախմբերի ուսումնասիրման, հանրահռչակման և օգտագործման, ինչպես նաև անշարժ հուշարձանախմբերի, պատմական, բնապատմական միջավայրի, պատմամշակութային հողերի և դրանց հարող տեղանքապատկերի (լանդշաֆտի) ամբողջական պահպանումն իրականացնելու նպատակով.

21) **հնագիտական պարկ**՝ հնագիտական այն համալիր հաստատությունները, որոնք ստեղծվել են հնագիտական ժառանգության թանգարանացման իրագործման համար հնագույն ժամանակներում պատմականորեն ձևավորված տարածքների վրա հստակ տեղայնացված հուշարձանների սահմաններում՝ ապահովելու վերջիններիս հնագիտական, մշակութային և բնական ամբողջական արժեքների պահպանությունը, հետազոտումը և հանրահռչակումը.

22) **համամարդկային նշանակության հուշարձան**՝ հայ ժողովրդի պատմության, նրա նյութական և հոգևոր մշակույթի նշանակալի հուշարձանների առավել բարձրարժեք, բացառիկ նմուշները, որոնք ունեն պատմության, արվեստի կամ գիտության տեսանկյունից բացառիկ համընդգրկուն արժեք, կարող են սահմանված կարգով ընդգրկվել համաշխարհային ժառանգության ցանկում:

(1.1-ին հոդվածը լրաց. 01.03.23 ՀՕ-38-Ն)

(01.03.23 ՀՕ-38-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթ)

Գ Լ ՈՒ Խ 2

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՈՒ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՐԱՎԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Հոդված 8. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում հայաստանի հանրապետության կառավարության իրավասությունները

(վերնագիրը փոփ. 01.03.23 ՀՕ-38-Ն)

Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում Հայաստանի Հանրապետության կառավարությունը՝

ա) ապահովում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում պետական քաղաքականության իրականացումը.

բ) հաստատում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի հանրապետական և մարզային պետական ծրագրերը.

գ) ապահովում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի ֆինանսավորումը՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեով նախատեսված միջոցների հաշվին.

դ) հաստատում է անշարժ հուշարձանների պետական ցուցակները, դրանց հաշվառման, ուսումնասիրման, պահպանության, ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման, փոփոխման և օգտագործման կարգը.

դ1) հաստատում է պետական սեփականություն համարվող հուշարձանների գույքային իրավունքների պետական գրանցման կարգը.

ե) ստեղծում է պատմամշակութային ու բնապատմական ~~արգելոցներ~~ հնավայրեր, ~~արգելոց~~ հնավայր-թանգարաններ, հնագիտական պարկեր և հաստատում դրանց կանոնադրությունները.

զ) միջազգային նորմերի սահմաններում նպաստում է այլ պետություններում գտնվող հայկական հուշարձանների հաշվառման, ուսումնասիրման, պահպանման, ամրակայման, նորոգման, վերականգնման և քարոզչական միջոցառումների իրականացմանը.

է) թույլտվություն է տալիս հանրապետական նշանակության հուշարձանները տեղափոխելու և փոփոխելու համար.

է1) հաստատում է հուշարձանների պետական ցուցակում նորահայտ հուշարձան ընդգրկելու և պետական ցուցակից հուշարձան հանելու վերաբերյալ չափորոշիչները.

ը) իրականացնում է օրենսդրությամբ նախատեսված այլ լիազորություններ:

(8-րդ հոդվածը փոփ., լրաց. 01.03.23 ՀՕ-38-Ն, լրաց. 10.09.24 ՀՕ-332-Ն)

(01.03.23 ՀՕ-38-Ն օրենքն ունի եզրափակիչ մաս և անցումային դրույթ)

Հոդված 9. Հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառում

լիազորված մարմնի իրավասությունները

(վերնագիրը փոփ. 01.03.23 ՀՕ-38-Ն)

Լիազորված մարմինը՝

ա) մասնակցում է հուշարձանների պահպանության և օգտագործման բնագավառի պետական քաղաքականության ձևավորմանը, Հայաստանի Հանրապետության կառավարություն է ներկայացնում պետական ծրագրերի, որոշումների նախագծեր, հաստատումից հետո կազմակերպում և վերահսկում է դրանց իրականացումը.

բ) Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանն է ներկայացնում հուշարձանների պետական հաշվառման, պահպանության, ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման, փոփոխման և օգտագործման գիտամեթոդական կարգը.

գ) պետական վերահսկողություն է ապահովում հուշարձանների պահպանության և օգտագործման մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջների կատարման նկատմամբ.

դ) իր իրավասության սահմաններում իրականացնում է պետական սեփականություն համարվող և չօգտագործվող հուշարձանների տնօրինումը, կատարում դրանց ամրակայման, վերականգնման և բարեկարգման աշխատանքները.

ե) գրանցում և վերահսկում է հուշարձանի նկատմամբ սեփականության իրավունքի և օգտագործման ձևի փոփոխումները.

զ) միջազգային նորմերի սահմաններում հաշվառում և ուսումնասիրում է Հայաստանի Հանրապետության տարածքից դուրս գտնվող հայկական հուշարձանները, նպաստում դրանց պահպանմանը.

է) ստեղծում է պատմամշակութային արժեքների գիտատեղեկատու շտեմարան, հրատարակում կատալոգներ, ուսումնական, գիտահետազոտական, ճանաչողական նպատակներով ապահովում է հուշարձանների և դրանց վերաբերյալ տեղեկատվության մատչելիությունը.

է1) հաստատում է հուշարձանների տարածքներում տեղադրվող տեղեկատվական ցուցանակների ձևը.

է2) հաստատում է հուշարձանների պահպանական պարտավորագրի ձևը.

է3) հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից ֆինանսավորվող պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ուսումնասիրման, ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման, փոփոխման և տարածքի բարեկարգման գիտանախագծային փաստաթղթերի կազմման և հնագիտական պեղումների իրականացման վերաբերյալ կողմնորոշիչ գները.

է4) Հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա հնագույն, հին և միջնադարյան ժամանակաշրջանների պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով պատկանող և անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման համար ճարտարապետահատակագծային առաջադրանքի ձևը.

է5) Հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա հնագույն, հին և միջնադարյան ժամանակաշրջանների պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով պատկանող և անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման շինարարության թույլտվության ձևը.

է6) Հաստատում է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա հնագույն, հին և միջնադարյան ժամանակաշրջանների պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով պատկանող և անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման շինարարության ավարտական և շահագործման ակտի ձևը.

ը) վարում է հուշարձանների պետական հաշվառումը (կադաստրը).

թ) կազմում և սահմանված կարգով հաստատում է հուշարձանների պահպանական գոտիների նախագծերը ու սահմանում դրանց պահպանության ռեժիմը.

ժ) առաջարկություն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության կառավարություն՝ պատմամշակութային ~~արգելոց~~ հնավայր ստեղծելու վերաբերյալ.

ժա) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով համաձայնություն կամ մասնագիտական եզրակացություն է տալիս հուշարձաններ ունեցող բնակավայրերի, դրանց հատվածների հատակագծման, կառուցապատման, ինչպես նաև հուշարձան համարվող առանձին շինությունների և համալիրների ամրակայման, վերականգնման, փոփոխման և բարեկարգման նախագծերի վերաբերյալ, դրանց իրականացման ընթացքում վերահսկում է հուշարձանների անվթարության ապահովումը.

ժա1) Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանված կարգով տալիս է Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող և օտարման ոչ ենթակա հնագույն, հին և միջնադարյան ժամանակաշրջանների պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների, Հայաստանյայց Առաքելական Սուրբ Եկեղեցուն (Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին) սեփականության իրավունքով պատկանող և անհատույց անժամկետ օգտագործման իրավունքով հանձնված պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների ամրակայման, նորոգման, վերականգնման, փոփոխման և տեղափոխման ճարտարապետահատակագծային առաջադրանքները, շինարարության թույլտվությունները, շինարարության ավարտական և շահագործման ակտերը.

ժբ) թույլտվություն է տալիս հուշարձանների հետախուզման և պեղման աշխատանքների համար, գրանցում դրանք և վերահսկում դրանց կատարման ընթացքը.

ժգ) արգելում կամ դադարեցնում է հուշարձանի պեղման, ամրակայման, նորոգման, վերականգնման, տեղափոխման, փոփոխման, ինչպես նաև շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքները, եթե դրանք վնասել են կամ դրանց շարունակումը կարող է վնասել հուշարձանը կամ դրա պահպանական գոտին.

ժդ) նպաստում է ոչ պետական սեփականություն համարվող հուշարձանների պահպանական միջոցառումների իրականացմանը.

ժե) իրականացնում է սույն օրենքով և իրավական այլ ակտերով նախատեսված լիազորություններ:

Գ Լ ՈՒ Խ 4

ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ԵՎ ՊԱՏՄԱԿԱՆ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

Հոդված 15. Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը

Հուշարձանների և պատմական միջավայրի պահպանության ապահովման միջոցառումների համակարգը ներառում է՝

ա) հուշարձանների հայտնաբերումը և պետական հաշվառումը.

բ) հուշարձանների պահպանության գոտիների սահմանումը.

գ) պատմամշակութային ~~արգելոցների~~ հնավայրերի ստեղծումը.

դ) պատմական բնակավայրերի, դրանց առանձին հատվածների պատմամշակութային հիմնավորման նախագծերի կազմումը.

ե) հուշարձանների և դրանց տարածքի պահպանության ապահովումն ու վերահսկումը.

զ) շինարարական, գյուղատնտեսական և այլ աշխատանքների իրականացման ընթացքում հուշարձանների ու դրանց պատմական միջավայրի անվթարության ապահովումը.

է) հուշարձանների պեղումների, ամրակայման, վերականգնման, նորոգման աշխատանքների և օգտագործման կարգերի սահմանումը.

ը) հուշարձանների պահպանության քարոզչությունը:

Հոդված 16. Հուշարձանների տարածքը, պահպանման գոտիները, դրանց կարգավիճակը և օգտագործման ռեժիմը

Հուշարձանի տարածքը իր զբաղեցրած և պատմականորեն ու գործնական առումով դրա հետ կապված և սահմանված կարգով առանձնացված հողատարածքն է:

Հուշարձանների և դրանց պատմական միջավայրի պահպանության ապահովման, պատմագեղարվեստական արժեքների բացահայտման, նպատակային օգտագործման և բարենպաստ տեսողական ընկալման նպատակով սահմանվում է հուշարձանի պահպանական գոտիների համակարգ և օգտագործման ռեժիմ:

Հուշարձանների պահպանական գոտիների համակարգը կարող է ներառել՝

ա) հուշարձանի պահպանության գոտին.

բ) կառուցապատման կարգավորման գոտին.

գ) լանդշաֆտի պահպանման գոտին:

Հուշարձանների պահպանական գոտիները, բնակավայրերի պատմամշակութային հիմնավորման նախագծերը ելակետային հիմք են տարածաշրջանների, քաղաքների և մյուս բնակավայրերի մանրամասն հատակագծման և կառուցապատման նախագծերի համար: Նշված գոտիների տարածքներում հողային, շինարարական և այլ տեսակի աշխատանքների, ինչպես նաև տնտեսական գործունեության իրականացումը կատարվում է լիազորված մարմնի թույլտվությամբ:

Հուշարձանի պահպանական գոտիների տարածքը դասվում է պատմամշակութային նշանակության հողերի կատեգորիային և ունի այդ հողերի համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգավիճակ և օգտագործման ռեժիմ:

Հուշարձանների տակ գտնվող, ինչպես նաև դրանց պահպանության գոտու և պատմամշակութային ~~արգելոցների~~ հնավայրերի հողերը ոչ նպատակային օգտագործման համար հետ վերցնելն արգելվում է: Այդ հողերի ցանկը հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

Հոդված 17. Պատմամշակութային ~~արգելոցները~~ հնավայրերը, դրանց կարգավիճակը և գործունեության ռեժիմը

Պատմամշակութային ~~արգելոցները~~ հնավայրերը ուշարձանների այն համակառույցները, համալիրներն ու հուշարձանախմբերն են՝ իրենց շրջակա բնապատմական միջավայրով, որոնք պատմական, գիտական, գեղարվեստական, ազգագրական հատուկ արժեք են ներկայացնում:

Պատմամշակութային ~~արգելոցն~~ հնավայրը ստեղծվում է հուշարձաններ ունեցող բնակավայրերի, դրանց հատվածների, բնական և պատմականորեն ձևավորված արհեստական լանդշաֆտի, պատմամշակութային համալիրի և դրա պատմական միջավայրի պահպանության նպատակով:

Պատմամշակութային ~~արգելոց~~ հնավայր ստեղծելու առաջարկությունը Հայաստանի Հանրապետության կառավարություն են ներկայացնում լիազորված մարմինը, պետական կառավարման տարածքային և տեղական ինքնակառավարման մարմինները:

Պատմամշակութային ~~արգելոցի~~ հնավայրի տարածքի հողօգտագործումը կարող է թույլատրվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Գ Լ ՈՒ Խ 7

ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Հոդված 35. Պետական սեփականություն համարվող հուշարձանները

Հայաստանի Հանրապետության տարածքում գտնվող բոլոր հուշարձանները, որոնք օրենսդրությամբ սահմանված կարգով չեն համարվում համայնքների, իրավաբանական կամ ֆիզիկական անձանց սեփականությունը, Հայաստանի Հանրապետության սեփականությունն են:

Պետական պատմամշակութային ~~արգելոցները~~ հնավայրերը, դրանց մաս կազմող հուշարձանները, կառույցները և հողատարածքները չեն տարանջատվում և օտարվում:

Հայաստանի Հանրապետության պետական սեփականություն համարվող այն հուշարձանների ցանկը, որոնք ենթակա չեն օտարման, հաստատում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

(35-րդ հոդվածը խմբ. 11.04.03 ՀՕ-530-Ն)